

ԲԱՌՈՎ ԵՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ  
ՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ  
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադասության այն երկրորդական անդամը, որը կոչվում է որոշիչ, լրացնում է նախադասության անդամ հանդիսացող որևէ գոյականի կամ գոյականաբար գործածված բառի և արտահայտում այդ անդամի որակական, քանակական, հարաբերական և այլ հատկանիշներն ու յուրահատկությունները անմիջականորեն, ինչպես և միջնորդաբար, այսինքն՝ նրա հետ ժամանակով, տարածությամբ մոտ գտնվող և այլ հարաբերություններով առնչվող ուրիշ առարկաների գործողություններով, դրությամբ և հատկանիշներով:

Հայերենում իբրև որոշիչ կիրառվում են ածականները, գոյականները, դերանունները, թվականները, բայերը, մակբայները: Այս բոլոր խոսքի մասերը որոշիչ են դառնում հիմնականում իրենց բուն նշանակությամբ, առանց փոփոխության, իրենց սկզբնական կամ ուղիղ ձևով՝ բացառությամբ գոյականների, որոնք կարող են որոշիչ դառնալ նաև թեք հոլովներով՝ տրականով, գործիականով, բացառականով և այլն<sup>1</sup>:

Օրինակ՝

ա) Ածականով՝ Լուսնի *կաթնագույն լույսի* տակ՝ ծովի հանդարտ ջրերի վրա, մեղմիկ սահում էր մակույկը, և *գիշերային խաղաղության* մեջ տարածվում էին *ոյութական հնչյունները* (Ն-Դ.):

*Լուսնկա գիշերները* երիտասարդը ծովափին՝ խարույկի մոտ, ձկնորսների հետ ունկնդրում էր նրանց *քաղցրահնչյուն սազի հոգեհմա ելևէջները...* (Ավ.Իս.)  
բ) Գոյականով՝

1. Ուղղական հոլովով՝ Հյուրերի գալու առիթով նրանք հազել էին գույնզգույն *մետաքս ու կերպաս հագուստներ՝ արծաթ, ոսկի կոծակներով, ծարմանդներով...* (Ստ.Զ.)

Նրանք իմ որբ անցյալն էին,

ես՝ *ապագան* նրանց *ոսկի...* (Հովի. Ե.)

2. Տրական հոլովով՝ Դրախտ էր մեր այգին, և հինգ-վեց տարեկանից նրա *ցերեկվա պահապանը* ես էի՝ քույրերիցս մեկնումեկի հետ կամ մենակ (Ավ.Ա):

Ուրեմն թողեք,

1 Տես *Ս.Աբրահամյան, և. Պառնասյան, Հ.Օհանյան, Խ.Բաղիկյան*, ժամանակակից հայոց լեզու, հ. III, Երևան, 1976, էջ 177:

Թողեք.

Որ ձեզ էլ դարձնեն մասնակից

Այն նախածանոթ հույսի համտեսված անուշությանը.

Որ մեր *երեկվա*

Ո՛ր մեր *այսօրվա անուժությանը*

Ասում է. «Կանգ առ»... (Պ.Ա)

3. *Բացառական հոլովով*՝ Իրար հետևից ներս մտան հյուրերը՝ բութ մատերին *ոսկուց* խոշոր *մատանիներ*, որոնք կոչվում էին կնքամատանիներ (Ատ.Ձ):

4. *Գործիական հոլովով*՝ Որքան էլ *աղավնիներով նետավարժությունը* ամենօրյա երևույթ էր իշխանի բակում՝ այնուամենայնիվ իշխանն այսօր տհաճությամբ էր նայում այդ խաղին (Ատ.Ձ):

Իսկ պատնկախ գորգերի վրա, գրեթե բոլոր սրահներում, կախված էին հին ու նոր զենքեր. *պատյանով* և առանց պատյանի մերկ *սրեր*... (Ատ.Ձ)

գ) Դերանունով՝ *Ամբողջ քաղաքը* ներկայացնում էր մի անշարժ, սառցային զանգված (Դ):

Եվ նրա *այդ խնջույքները* տևում էին օրեր, երբեմն էլ շաբաթներ՝ կերուխումով ու որսով... (Ատ.Ձ.)

դ) Թվակաճով՝ Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ռոճում են *հազար գամփոներ*... (Ա.Բ)

ե) Դերբայով՝ *Թխպամած ամրոցի* թերակղզին կարծես այդ պահին կախվում էր անդունդից (Դ.Դ):

Լրա հայացքը սևեռած մնաց *մխացող օջախին*, մոխրի մոտ չոքած կնոջը (Ա.Բ):

զ) Մակբայով՝ Կուշտ կերած ձիերը *արագ քայլերով* բարձրանում էին քարոտ արահետը և ամեն քայլափոխին փնջում (Ա.Բ):

Կինը թեյի պատրաստություն էր տեսնում, անխոս և *արագ շարժումներով* (Ա.Բ):

Որոշիչը կարող է արտահայտվել բառով:

Օրինակ՝

Գարնան *ջինջ երկնքի* վրայով սահում էր մի *սպիտակ ամպ*, ասես *արար աշխարհին* հպարտությամբ ցույց էր տալիս, որ *անհաս բարձունքում* լողանում է արևի շողերի մեջ (Ա.Բ):

Նա անցնում էր *անհույս ու աննպատակ մարդու անորոշ քայլերով* .. (Ն-Դ)

*Ամայի փողոցում* մի *փորժիկ շուն* կուչ էր եկել մի *փակ դռան* առջև... (Ն-Դ)

Որոշիչը կարող է արտահայտվել նաև ստորադաս նախադասությամբ:

Օրինակ՝

Դա այն գաղտնի ծորակներից մեկն էր, որոնք պատահում են Փոքր Կովկասի հարավ-արևելյան ժայռոտ լանջերին (Վ.ԱՆ):

Նրա դեմքն այդ միջոցին արտահայտում էր ոչ թե հոգնածություն, այլ մի ներքին սրտմաշուկ հուզմունք, որը, սակայն, մի յուրօրինակ գրավչություն էր տալիս նրա լուսավիր աչքերին (Մ):

Կանաչների միջով հոսում էր գետակը, որի ակունքները անտառի մթին ծորերի աղբյուրներն էին (Ա.Բ):

Սակայն մինչ սրանք առանձին-առանձին քննելը նշենք, որ այս երկու կաղապարների ընդհանրություններն ու տարբերությունները լիարժեք և հստակ գտնելու և տարբերակելու համար պետք է կիրառել համեմատությունների և փոխադարձ փոխարինումների մեթոդը<sup>2</sup>:

Բառով և ստորադաս նախադասությամբ արտահայտված որոշիչները լեզվամտածողության դրսևորման երկու տարբեր ձևեր են: Դրանք իրարից անկախ են և իրար կողքի հավասարապես գոյություն ունեն լեզվում և չեն բացառում մեկը մյուսին: Նրանց փոխարինումները մեկը մյուսով հետազոտողի համար հետապնդում են գիտական նպատակներ<sup>3</sup>: Այս երկու տիպի գործածությունն արդեն ստանում է ոճական արժեք:

Փոխակերպվող կաղապարի տարբեր եզրերի օգտագործումն էլ արդեն բխում է խոսողի ընկալումից, իմացության աստիճանից, լեզվական հմտություններից, հաղորդակցման ընթացքից, համատեքստից, հաղորդակցման ներգործուն լինելու կարիքից, այսինքն՝ հեղինակի անհատական վերաբերմունքից:

Քերականական այս ուրույն կաղապարը (ստորադաս նախադասության՝ գլխավոր նախադասության որևէ անդամին փոխարինելը) պետք չէ ընդունել մասն ծագումնաբանորեն, այսինքն՝ կարծել, թե լեզվում նախապես իշխում էին պարզ ընդարձակ նախադասությունները, որոնց անդամների փոխարինումները ստորադաս նախադասությամբ հետագայում առաջացրել են բարդ ստորադասական նախադասություններ, կամ ընդհակառակը<sup>4</sup>:

Ոչ բոլոր որոշիչներն են, որ կարող են արտահայտվել ստորադաս նախադասությամբ: Դա կախված է այն բանից, թե ինչ տիպի որոշիչ է:

Օրինակ՝

- 1) Գոյականի ուղղ-հոլ.՝ Գարնան արև օրերը հիշեցնում են ինձ, որ շուտով մայիս էր (Ա.Բ.):

<sup>2</sup> Տե՛ս Ա. Պասպոյան, Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունն արդի հայերենում, Երևան., 1968, էջ 54:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 50:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 52:

եվ մոռացված և անմոռաց հեքիաթներ.

*Լույս հնչուններ*, որ դողում են աշխարհում... (Վ.Տ.)

2) Գոյականի տր. հոլ.՝ Աշխարհին... *մանկան մաքրություն* է պետք... (Պ.Ս.)

3) Գարաբերական ած.՝ Գարբիներն զբաղված էին *երկաթե կարթեր* և ջախջախող գործիքներ կռելով (Ս.):

4) Որոշյալ դերանունով՝ Պարսպի ներսը մնացած *ամբողջ տարծությունը* ծածկված էր պտղածառերով, խաղողի որթերով և ծաղկող քփերով... (Ստ. Զ.)

5) Չափ ու քանակի մակբայով՝ Խանը մեզանից *ավելի հարկ* չի կարող առնել, մի խոսքով՝ նա մեզ ամեն չարից կպահպանե (Բ.):

Վերոհիշյալ օրինակներում որոշիչները չեն փոխակերպվում:

Միշտ չէ, որ հնարավոր է մի կաղապարը փոխարինել մյուսով: Սակայն ներքոհիշյալ օրինակներում տրվող որոշիչները փոխակերպելի են.

Նորա *գունաթափ դեմքը* այնքան շփոթված էր, այնքան ողորմելի, որ մարդ խղճում էր նորա վրա նայելիս (Բ.):

Նորա *դեմքը, որը գունաթափ էր*, այնքան շփոթված էր, այնքան ողորմելի, որ մարդ խղճում էր նորա վրա նայելիս:

*Կատաղի քամին* վժժալով ներս էր պրծնում (Լ-Դ):

*Քամին, որը կատաղի էր*, վժժալով ներս էր պրծնում:

Մի *հմուտ ծեռք* սերենադ էր նվագում ջութակի վրա (Լ-Դ):

Մի *ծեռք, որը հմուտ էր*, սերենադ էր նվագում ջութակի վրա:

Բառով արտահայտված որոշիչը, կապված նախադասության (պարզ) ընդհանուր կառուցվածքի հետ, միտքը հակիրճ ու սեղմ արտահայտելու միտում ունի: Ստորադաս նախադասությամբ արտահայտված որոշիչը ավելի ընդարձակ է, որն էլ հնարավորություն է ընձեռում ավելի լայն կերպով բնութագրելու լրացյալը:

Երբ անհրաժեշտ է լինում գոյականի մանրամասն ու հանգամանալից բնութագրությունը տալ, անհնարին է լինում այն գոյականի հետ կապակցել բառով արտահայտված որոշիչի ձևով: Այսպիսի փորձերը հասցնում են խճողումների, երբեմն էլ պարզապես անհնարին են:

Ստորադաս նախադասությամբ արտահայտված որոշիչը բառով արտահայտված որոշիչների նման գործառում է գոյականի իմաստային ծավալման հետևանքով, սակայն տարբերվում է կառուցվածքային առումով՝ չնայած նախադասության մեջ կատարում է նույն շարահյուսական պաշտոնը:

Ստորադաս նախադասությունը գերադասի բաղադրիչ մասն է և նրա հետ կարող է կապվել ստորադասական շաղկապներով, շաղկապական և հարա-

բերական բառերով, ինչպես նաև շարահարությամբ: Կապակցական այսպիսի բազմերանգ դրսևորումները հնարավորություն են տալիս արտահայտելու իմաստային ամենաբազմազան հարաբերությունները:

Որոշակի տարբերություններ են նկատվում նաև նրանց արտահայտած հարաբերություններում: Պարզ նախադասության որոշիչը արտահայտում է առարկայի որակը, որպիսությունը, ինչից լինելը, ինչին վերաբերելը, հատկանիշը՝ կապված տեղի, ժամանակի, հանգամանքների հետ: Որոշիչ արտահայտած այդ հարաբերությունները դրսևորվում են համեմատաբար սահմանափակ տարբերակներով (որակի, որպիսության, չափ ու քանակի, վիճակի, տեղի, ժամանակի, գնի ու արժեքի, վերաբերության, ցուցական, անորոշ և այլն)<sup>5</sup>:

Որոշիչ ստորադասական նախադասությունները այդ հատկանիշն արտահայտում են անհամեմատ հարուստ տարբերակներով, որոնց թիվը հասնում է շուրջ քսանի (նկարագրական, սոսկ տեղեկատվական, բաղդատական, հետևանքի, տեղի, ժամանակի, նպատակի, ուժի և կարևորության, վերաբերության և այլն)<sup>6</sup>:

Ի տարբերություն բառով արտահայտված որոշիչ՝ ստորադաս նախադասությամբ արտահայտված որոշիչն ունի նաև ստորոգում:

Ստորադաս նախադասությամբ մտքի տարբեր իմաստային նրբերանգները դրսևորելու և առարկաները բացառիկ հարուստ կերպով բնորոշելու գործիմանծ չափով օժանդակում է ստորոգման առկայությունը:

Եթե ստորադաս նախադասությամբ արտահայտված որոշիչը փոխարինենք բառով, այսինքն՝ փոխակերպենք այն, ապա ոճական շատ նրբերանգներ դուրս կմնան, խոսքն էլ կաղքատանա: Դա կապված է հիմնականում ստորոգյալի՝ դերբայի վերածվելու հետ, քանի որ արդյունքում կորչում է ստորոգյալի ժամանակային բազմազանությունը:

Օրինակ՝

...Ինքը պայծառացած գնաց մասնակցելու *հացկերության, որ տակավին շարունակվում էր գինիներով ու զվարթ զրույցներով* (Ստ. 2):

...Ինքը պայծառացած գնաց մասնակցելու *գինիներով ու զվարթ զրույցներով տակավին շարունակվող հացկերության*:

Նրան զայրացնում էին անտարբեր *նախարարները, որ քիչ էին հուզվում թագավորի արարքներից* (Ստ. 2.):

<sup>5</sup> Տե՛ս Գ.Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1951, էջ 26-27: Վ.Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Խ. Ա, Երևան, 1958, էջ 222-239:

<sup>6</sup> Տե՛ս Բ.Վերդյան, Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Երևան, 1970, էջ 134-144:



Նրան զայրացնում էին անտարբեր, *թագավորի արարքներից քիչ հուզվող նախարարները:*

Եթե տանք արդեն փոխակերպված տարբերակը, ապա չենք կարող հստակ վերականգնել բնօրինակը:

Օրինակ՝

Ծանր զղջումն աչքերի մեջ նա նայեց կիսավեր Չալիծորին, տեսավ *շղթաներով ու պարաններով կապկապված հայ գերիներին քշող, հեռացող թուրքերին:*

Ծանր զղջումն աչքերի մեջ նա նայեց կիսավեր Չալիծորին, տեսավ հեռացող *թուրքերին, որոնք քշում էին շղթաներով ու պարաններով կապկապված հայ գերիներին (Ս.Խ.):*

*Մի քանի թույն տևող լռություն* իջավ:

*Լռություն* իջավ, *որ տևեց մի քանի թույն:* (Ստ.Ձ.)

Կամ՝

*հավաքված մարդիկ*  *մարդիկ, որ հավաքվել էին*  
*մարդիկ, որ հավաքված էին*  
*մարդիկ, որ հավաքվեցին*

*մեկնող ուղևորը*  *ուղևորը, որ մեկնում է*  
*ուղևորը, որ մեկնում էր*  
*ուղևորը, որ մեկնելու է*  
*ուղևորը, որ մեկնելու էր*

Բառով և ստորադաս նախադասությամբ արտահայտված որոշիչներն իրարից տարբերվում են նաև շարադասությամբ:

Բառով արտահայտված որոշիչը, որպես կանոն, նախադաս է:

Օրինակ՝

Աստղերը չքացել էին. միայն լուսաստղն էր թրթռում *հայոց լեռնապարհին, բացկուրծք սարերին (Ս.Գ):*

Ո՛ր ես անվերջ փորձ եմ անում

Իմ *թափանցիկ լռության* տակ պահվել մի կերպ (Պ.Ս.):

Սակայն հնարավոր է նաև որոշիչի հետադաս կիրառություն: Երբ բառով արտահայտված որոշիչը հետադաս է, այս դեպքում որոշիչի և որոշյալի կապը թույլ է լինում, բայց ավելի ընդգծվում ու շեշտվում է որոշիչը, այսինքն՝ ուշադրությունը բևեռվում է առարկայի հատկանիշի և ոչ թե առարկայի վրա<sup>7</sup>:

<sup>7</sup> Տես *Գ.Օհանյան*, Ածական անունը ժամանակակից հայերենում, Երևան, 1962, էջ 143:

Օրինակ՝ Իսկ առավոտից մինչ գիշեր նա թափառում էր սար ու ձոր՝ լսելու երգերը հազարալեզու... (Ավ.Իս):

*Արշալույսը՝ գունեղ, խորհրդավոր, ավելի գեղեցիկ թվաց նրան (Մ.Գ):*

Այսպիսով՝ հետադաս որոշյով կապակցության մեջ արդեն հատկանիշն ավելի է շեշտվում՝ կրելով դիրքային փոփոխություն:

Օրինակ՝ Նույն նողկալի երազը՝ ահավոր ու սարսափազդու, վերջին շաբաթվա ընթացքում երրորդ անգամ այցի եկավ քեռի Թորոսին (Մ.Գ):

Եթե հետադաս որոշիչը դարձնենք նախադաս, ապա հատկանիշը կթուլանա: Նույն նողկալի, *ահավոր ու սարսափազդու երազը* վերջին շաբաթվա ընթացքում երրորդ անգամ այցի եկավ քեռի Թորոսին:

Փորձենք նաև հակառակը՝

Այգում խաղաղություն էր, ծաղկաթափ էին ծառերը և բողբոջների փոխարեն նշմարվում էին *կանաչ ու մանրիկ պտուղները* (Ա.Բ):

Այգում խաղաղություն էր, ծաղկաթափ էին ծառերը և բողբոջների փոխարեն նշմարվում էին *պտուղները՝ կանաչ ու մանրիկ*:

Որոշիչ ստորադաս նախադասության շարադասությունը կայուն է: Այն շարադասվում է գլխավորի լրացյալից հետո, ուստի և, նայած գլխավոր նախադասության մեջ այդ լրացյալի գրաված դիրքին, կարող է լինել միջադաս և վերջադաս.

Օրինակ՝ Իսկ մեկուսի կանգնած *երիտասարդը, որ հոնքերի տակից նայում էր իրեն հանդիմանող իշխանին*, հանկարծ առաջ եկավ շառագունած (Ստ.Զ):

Միակ *վտակը, որից գորջը ջուր առավ երեկ*, կիրճի բերանից դեպի այն խորածորն է իջնում (Մ):

ԵՎ համբուրված իմ շուրթերին դողում էին սիրո խոսքեր,

Ինչպես ցողի կաթիլները այն *թփերի*,

*Որոնց վրա անհոգ քամին դասն է սերտում իր գժության...* (ՊՍ)

Առաջադաս ստորադասականի օրինակներ հազվադեպ են լինում, այն էլ բացառապես *այն* հարաբերյալի առկայության դեպքում և գերազանցապես գեղարվեստական գրականության մեջ<sup>8</sup>:

Օրինակ՝ *Որ գյուղը մտնես, այն գյուղի փափախը դիր:*

*Որ երզը գիտես, այն երզն էլ երգիր:*

Ի մի բերելով մինչ այժմ ասածները՝ կարելի է եզրակացնել, որ միևնույն գործառույթի (որոշիչ) յուրահատկությունները բառով և նախադասությամբ արտահայտվելու դեպքում, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները

<sup>8</sup> Տե՛ս Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1984, էջ 155-156:

դրսևորվում են յուրովի: Դրանք տարբեր են կառուցվածքային առումով. քերականական տարբեր կաղապարներ են: Տարբեր են հաղորդած ինֆորմացիայի առումով. մեկը հակիրճ է, սեղմ, մյուսը՝ ծավալուն, բազմակողմանի բնութագրումով:

Ուստի այս երկու կաղապարներից որևէ մեկի ընտրությունն արդեն անհատի խնդիրն է: Յուրաքանչյուր անհատ իր մայրենի լեզվից օգտվում է յուրովի, գործածում իր իմացած կամ նախասիրած լեզվական միջոցներն ու բառապաշարը, ինչին նպաստում են անհատի խառնվածքը, հոգեբանությունը, դարաշրջանն ու աշխարհայացքը: Ահա այս ժամանակ է, որ ի հայտ են գալիս լեզվի հնարավորություններն ու արտահայտչական միջոցների բազմազանությունը:

#### Համառոտագրություններ

Ավ.Ա. - Ավետիս Ահարոնյան  
Ա.Բ. - Ակսել Բակունց  
Ավ. Իս. - Ավետիք Իսահակյան  
Դ.Դ. - Դերենիկ Դեմիրճյան  
Հովհ.Շ. - Հովհաննես Շիրազ  
Մ. - Մուրացան  
Մ.Գ. - Մուշեղ Գալչոյան

Ն.-Դ. - Նար-Դոս  
Պ.Ա. - Պարույր Սևակ  
Ստ.Զ. - Ստեփան Զորյան  
Ս.Խ. - Սերո Խանգաղյան  
Վ.Ան. - Վախթանգ Անանյան  
Վ.Տ. - Վահան Տերյան  
Ր. - Րաֆֆի